ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0040, Աճառյան փ. 2

Հեռ.՝ (+374 10) 61 07 30
Ֆաքս՝ (+374 10) 61 57 46
Էլ.փոստ՝ armaids@armaids.am
http://www.armaids.am

20.08.2014թ. N 464

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն(ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1-ՁԻԱՀ-ՇՀԾՁԲ-14/2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ, ք.Երևան, Աճառյան 2 հասցեով, N 209 սենյակ, մինչև 2014թ. օգոստոսի 29-ը, ժամը՝ 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արամ Խաչատրյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ-ի շենքում՝ Աճառյան 2 հասցեով, N 207 սենյակում, 2014թ. օգոստոսի 29-ին, ժամը՝ 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերումը:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատակարարման (որը կազմված է 3 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը. որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner@armaids.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 11 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Արամ Խաչատրյանը
Գնումների մասնագետ